

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**2019թ. III եռամսյակում ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեության վերաբերյալ**

2019թ. III եռամսյակում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել համակարգին վերապահված խնդիրների իրականացման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 40 առևտրային և 17 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 106-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 8-ի գործունեությունը՝ դադարեցվել:

1 հիմնարկ և 1 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում վերցվել են պետական հաշվառման, 2 հիմնարկ և 2 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 201 անհատ ձեռնարկատեր, 47-ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 26-ի գործունեությունը՝ դադարեցվել:

15 սուբյեկտի վերաբերյալ տրամադրվել են ամբողջական տեղեկություններ:

Ըստ գրասենյակների գրանցման գործընթացի իրավիճակը բնութագրվում է հետևյալ կերպ.

անվանում	իրավաբանական անձ			իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ			անհատ ձեռնարկատեր			Ամբողջական տեղեկությունների տրամադրում	ընդամենը	պետ. տուրք (հազ. դրամ)
	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	գործ. դադար.			
<b>Գենտրոնական մարմին</b>	18	19	1դ	1							39	298
<b>Մտեփանակերտ</b>	30	65	7	1	2		102	32	22	12	273	1274
<b>Ասկերան</b>	3	8					21	8	2		42	174
<b>Հաղբուրթ</b>		2					12				14	48
<b>Մարտակերտ</b>	3						13	1		3	20	91,5
<b>Մարտունի</b>	2	5					33	5			45	169,5
<b>Շուշի</b>	1	2			1		6		2		12	53
<b>Քաշաթաղ</b>		5			1		14	1			21	78,5
<b>Ընդամենը</b>	57	106	7/1դ	2	4		201	47	26	15	466	2186,5

Պետական միասնական գրանցամատյանից տրվել է 124 (119/5) տեղեկանք:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 2 305 500 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում III եռամսյակում արտաբյուջե է մտցվել 679 000 դրամ:

ԱՀ Նախագահի ծրագրից բխող միջոցառումների կատարման շրջանակներում իրականացվել են նախկինում գրանցված (հաշվառված) 18 սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով e-register.am կայքում տեղադրման աշխատանքներ:

Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել ապառիչ պատասխաններ:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից սիստեմատիկ հսկողություն է իրականացվել գործակալության կառուցվածքային ստորաբաժանման նկատմամբ, տրվել ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ:

**Գործակալության պետ**  
Կատարող՝ Բ. Առստամյան

**Գ. Մաքսիմովա**